ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 սեպտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

131
(2611)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 92



2018 թվականին՝ պաշտոնավարման 100 օրը լրանալու կապակցությամբ Հանրապետության հրապարակում հրավիրած հանրահավաքի ժամանակ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը քաղաքացիներին 2018-ի օգոստոսի 17-ին բացատրում էր.

«Որեւէ մեկը չմտածի, թե ես ձեզնից թաքուն որեւէ թուղթ կստորագրեմ կամ որեւէ գործողություն կանեմ: Երբ տեսնեմ, որ կա տարբերակ, որի շուրջ իսկապես կարելի է խոսել, ես կգամ եւ կկանգնեմ այստեղ, բոլոր մանրամասնություններով կներկայացնեմ ձեզ, եւ դուք կորոշեք՝ մենք գնում ենք այդ տարբերակով կարգավորման, թե չենք գնում»:

Մինչեւ այսօր ՀՀ հպարտ ու արժանապատիվ քաղաքացիների համար պարզ չէ, թե, ի վերջո, ինչ է բանակցվել: Նույն իրավիճակը նաեւ այսօր է: Հրապարակում բանակցությունների մասին բարձրաձայնել պատրաստվող Նիկոլ Փաշինյանն այժմ էլ ամեն ինչ անում է՝ առանց հրապարակ գալու եւ միայն ամբիոնից մեղադրական ելույթ ունենալով: Ստացվում է՝ հերթական անգամ նա խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 14-ին՝ Ազգային ժողովի դարպասների առջեւ տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքի ժամանակ, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների մի մասը կառավարական ամառանոցում՝ Նիկոլ Փաշինյանի կեցավայրում են եղել: «Բացի այն, որ ուղիղ եթերով նայել են, թե ինչ է կատարվում ԱԺ դարպասների առջեւ, նաեւ որոշել են, թե որն է լինելու իրենց քայլերի հաջորդականությունը: Փաշինյանը նրանց փոխանցել է, որ թեեւ սահմանի վիճակը գնալով կայունանում է, բայց պետք է այնպես անել, որ հասարակությանը շեղեն այդ օրակարգից: Լավագույն տարբերակ է ընտրվել հերթական անգամ ընդդիմադիրներին թիրախ դարձնելը»,- ասաց «Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը: Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ դա էր պատճառը, որ երեկ՝ սեպտեմբերի 15-ին, ՔՊ-ականները խորհրդարանում, իրար հերթ չտալով, մեկը մյուսի մեջ մրցավազքի մեջ մտնելով, քննադատեցին ու դատափետեցին ընդդիմադիրներին գրեթե ամեն ինչի՝ թալանից մինչեւ բռնի ուժով իշխանազավթման եւ ընդդիմադիր դաշտը զավթելու համար: Իշխանականները մոռացան թերեւս ընդդիմադիր պատգամավորներին նաեւ Քենեդու սպանության համար մեղադրել, այդպես գուցե նաեւ ամերիկացիներին սիրաշահող նոտա հղեին: Ջավեշտը՝ զավեշտ իհարկե, բայց փաստն այն է, որ հասարակությունը վաղո՛ւց հոգնել է «նախկիններն են մեղավոր» անդուլ ու ծեծված թեզից:

Երեկ՝ սեպտեմբերի 15-ին, Անվտանգության խորհրդի ընդլայնված կազմով խորհրդակցությանը (որին նաեւ Արցախից ժամանած պատվիրակությունն է ներկա եղել) կոնկրետ պատասխաններ ենթադրող հարցեր են հնչել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ քննարկման մասնակիցներին վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահեցրել է, թե որեւէ փաստաթուղթ չի ստորագրել ու չի էլ պատրաստվում ստորագրել: Փոխանցել է, որ խաղաղության պայմանագիր կստորագրի միայն այն դեպքում, երբ վստահ լինի ու երաշխավորված՝ Հայաստանի սուվերեն տարածքից միլիմետր անգամ չի պակասի, ադրբեջանական զորքն էլ ելման դիրքեր կվերադառնա: Արցախյան կողմին, սակայն, այս հայտարարությունը ոչ թե հանգստացրել, այլ մտահոգվելու ու մի շարք հարցեր բարձրացնելու տեղիք է տվել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ արցախցիները հետաքրքրվել են, որ եթե ՀՀ սուվերեն տարածքը պահպանվի, ու Փաշինյանը ստորագրի այդ պայմանագիրը, ապա ինչ է լինելու Արցախի ու Արցախի կարգավիճակի հետ: ՀՀ-ի հարցերը լուծելն ու մի կողմ քաշվելն Արցախից հրաժարվե՞լ է նշանակում. սա արցախցիների հիմնական խնդիրն է: Ի պատասխան՝ Փաշինյանը նշել է, որ բրյուսելյան վերջին հանդիպման ժամանակ Արցախի կարգավիճակի հարց չի քննարկվել: Ըստ էության, Արցախի պատվիրակության հարցն առկախված է մնում: Դատելով հանգամանքից, որ արդեն օրեր շարունակ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում հանրահավաքներ են ընթանում, կարելի է ենթադրել, որ արցախցիներն, այնուամենայնիվ, մտահոգություն են տեսնում չարաբաստիկ այդ պայմանագրի մեջ այն մասով, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումից հետո Արցախը կարող է Ադրբեջանի ամբողջականության մեջ դիտարկվել, ինչը միանշանակ Արցախի կորուստ է նշանակում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի հարցով անհանգստացած արցախցիների երեւանյան հանդիպումները նաեւ այսօր կշարունակվեն. նրանք կհանդիպեն ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների հետ եւս:

Իշխանությունների սիրելի Նարեկ Նալբանդյանին պատկանող ընկերությունը, որը ձու է արտադրում, այս տարվա մեջ արդեն երկրորդ անգամ է տուգանվում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն օգոստոսի 30-ին որոշում է կայացրել «Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ» ընկերությանը տուգանել 3 մլն 44 հազար 534 դրամի չափով: Ի դեպ, եւս 3 մլն դրամով Նալբանդյանի ընկերությունը՝ «Շիրակ» թռչնաֆաբրիկան, տուգանվել է ապրիլի 26-ին: Պարզվում է՝ այս ընկերության կողմից արտադրված ECO եւ ecoDemonstrator մակնշումներով հավկիթներն իրացվել են այն դեպքում, երբ դրանք չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, ինչը հանձնաժողովը որակել է որպես հասարակության մոլորեցման դրսեւորմամբ անբարեխիղճ մրցակցություն: Նույն խախտումն ընկերությունն արել է նաեւ այս տարվա ապրիլին: Հիշեցնենք՝ այս տարեսկզբին «Շիրակ» թռչնաֆաբրիկան մեծ անհանգստություն պատճառեց հավկիթի արտադրությամբ զբաղվող տնտեսվարողներին. ընկերությունը ինքնարժեքից էժան ձու էր հանել վաճառքի: Այս ընկերությունը ձվի շուկայում գնային տատանումներ էր անում: Նշենք, որ Նարեկ Նալբանդյանը իշխանությունների շնորհիվ ձեռք է բերել Ծաղկաձոր քաղաքի «Գոլդեն Փելիս» հյուրանոցային համալիրը 5 մլրդ դրամով եւ «փակովի» տարբերակով:

ԲՌՆԻ ՈՒԺՈՎ

«ՇԵՖԵՐԻՆ» ԳՈՀԱՑՆԵԼՈՒ ՔԱՅԼ

Իրավապաշտպան Մարինա Պողոսյանն ահազանգում է՝ երեկ՝ սեպտեմբերի 14-ին, ոստիկանները՝ կարմիր ու սև բերետավորները, իր հասցեին հայհոյանքներ են հնչեցրել, ապա բռնի ուժով ոստիկանական ավտոմեքենա նստեցրել ու բաժին տեղափոխել: ArmLur.am-ի հետ զրույցում նա համոզմունք հայտնեց, որ այդ ամենը ոստիկաններն արել են իրենց «շեֆերին» գոհացնելու համար:

-Տիկին Պողոսյան, երեկ Ձեր եւ Ձեր լրագրողի մասնակցությամբ միջադեպ է տեղի ունեցել Դեմիրճյան փողոցում: Փաստացի՝ ոստիկանները մի քանի հոգով Ձեզ բերման են ենթարկել: Ի՞նչ է կատարվել. կխնդրեմ ամփոփ ներկայացնեք:

-Երեկ տեղի ունեցածը նույնիսկ միջադեպ չէր. դա կոնկրետ հարձակում էր: Ես երբեք նման բան չեմ պատկերացրել որեւէ իշխանության ժամանակ: Երեկվա իմ ուղիղ եթերի ընթացքում ասել եմ՝ Դեմիրճյան փողոցի սահմանները չէ, որ բերետավորները պետք է պահեն՝ զինված-կահավորված, այլ հայրենիքի սահմանները. նրանք պիտի կանգնեն մեր մատղաշ տղաների կողքին: Երեւի, իմ այդ խոսքերից վիրավորված, վրեժից դրդված՝ կարմիր բերետավորները որոշեցին մեզ դաս տալ՝ կատարելով իրենց տերերի հրահանգները: Այդպես վարվեցին, որ մյուս լրագրողները եւ իրավապաշտպանները լռեն: Երբ երեկ տեսա, թե ինչ հրճված դեմքերով էին կանգնել կարմիր ու սեւ բերետավորները, նկատողություն արեցի բնականաբար, քանի որ հիմա մեր երկրում սուգ է, երկիր ենք կորցնում: Դեռ այդ պահին տեսա, որ սկսեցին ինչ-որ զանգեր անել: Նկատեցի, թե ինչպես մեկն իմ հասցեին վիրավորական խոսք հնչեցրեց, ի պատասխան ասացի՝ եթե համազգեստով չլիներ ապա կապտակեի: Հիմա զղջում եմ, որ նման բան չեմ արել: Երբ մենք հեռանում էինք, իմ եւ Արթուրի հասցեին հայհոյանքներ ուղղեցին, որոնք չեմ ներկայացնի բնականաբար, բայց կասեմ, որ ոչ պատշաճ բառեր էին: Կարմիր բերետավորներից մեկը մոտեցավ ինձ, հարցրեց՝ արդյո՞ք ես եմ ասել, որ կապտակեի, եւ «այո» պատասխանից հետո կրկին հայհոյանքներ հնչեցրեց: Այս ամենը նկարահանում էր իմ տասխանից հետո կրկին հայհոյանքներ հնչեցրեց: Այս ամենը նկարահանում էր իմ լրագրողը, ով նկարելու համար ծեծի ենթարկվեց. հաշվի չառան անգամ նրա բեյջը, իսկ ինձ ձերբակալեցին այնպես, ասես ահաբեկիչ էի: Ես միանշանակ հայտարարում եմ ի լուր աշխարհի (երեկ ինձ բազմաթիվ միջազգային կառույցներից են զանգահարել նաեւ)՝ ես այս հարցը լուծելու եմ իրավական դաշտում. դիմել եմ նաեւ ՀՀ նոր Գլխավոր դատախազին: Նա էլ է կին, եւ հուսով եմ՝ կհասկանա: Ես չեմ լռելու այս մասին:

-Ձեզ բերման ենթարկող ոստիկանները քանի՞սն էին:

-Հարձակվողները 10-ից 15-ն էին, ինձ ձերբակալողները՝ 3-4-ը: Ես իրականում թույլ մարդ չեմ, բայց պարանոցիս, ձեռքերիս իրենց ուժեղ սեղմումների պատճառով՝ զարկերակային ճնշումս իջել էր: Մեքենայում խնդրեցի՝ պատուհան բացեն, սակայն ասացին, թե դա ինձ չի հասնում: Շտապօգնությունն էլ բավականին ուշ հասավ՝ մոտ մեկ ժամ ուշացումով, երբ վաղուց հասել էինք ոստիկանական բաժանմունք:

-Քանի՞ ժամ եք մնացել ոստիկանական բաժանմունքում:

-Երեւի թե երկու ժամ այնտեղ էինք, հետո, բարեբախտաբար, եկան մեր ընկերները՝ Թագուհի Թովմասյանը, Ռուբեն Մելիքյանը, Տիգրան Ղազարյանը: Այս անտարբերությունն ու լռությունը ինձ համար նոր չեն:

-Ասում եք՝ տերերին պիտի ցույց տային ձեր հոլովակը. ո՞մ նկատի ունեք:

-Նկատի ունեմ ներկա իշխանություններին: Նիկոլ Փաշինյանը, ով զբաղեցնում է վերչապետի պաշտոնը, ինչ է չգիտի՞, որ լրագրողի հանդեպ չպետք է բռնի ուժ կիրառել, նա լրագրող է, ու եթե չեմ սխալվում, համալսարանը չի ավարտել: Եթե այն ժամանակ, երբ լրագրող էր, իր կնոջ հանդեպ նման կերպ վարվեին, երեւի կճանկռեր Ազգային ժողովի պատերը: Իսկ հիմա՞....Սա՞ է իրենց դեմոկրատիան:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԾ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ

Վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացը դադարեցվեց կմեկնարկի միայն այն ժամանակ, երբ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 18 պատգամավորներ կմիանան ընդդիմության հայտարարած ստորագրահավաքին:

Այս մասին երեկ լրագրողների հետ զրույցում հայտնեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը՝ պատասխանելով հարցին, թե արդյո՞ք պաշտոնապես սկսված է վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացը:

«Մենք ներկայացրեցինք 35 ստորագրություն: Ամբողջական ձեւաթուղթը կլինի, երբ որ այդ 35-ին կավելանան նաեւ 18-ը, -ասաց Մանուկյանը, - մենք պաշտոնապես հայտարարություն արել ենք, մեր պատգամավորները ձեւաթղթի վրա դրել են ստորագրություններ, հիմա աշխատանքներ ենք տանում, ակնկալում ենք 18 պատգամավորի եւս միանալը: Բնականաբար, քաղաքական համաձայնություններ կարող են լինել, տարատեսակ հոսքեր կարող են լինել, նաեւ, բնականաբար, ձեւաթղթում լինելու է վարչապետի թեկնածուի անունը»:

Մանուկյանը չցանկացավ ժամանակից շուտ հրապարակել հնարավոր թեկնածուի անունը՝ կարծիք հայտնելով, որ կարճ ժամանակ անց այդ մասին հայտարարություն կլինի:

Նշենք, որ վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացը սահմանվում է ՀՀ Սահմանադրության 115-րդ հոդվածով:

Դրա համաձայն՝ վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը եւ միայն այն դեպքում, եթե որոշման նախագծով միաժամանակ առաջարկվում է նոր վարչապետի թեկնածու:

Որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց 48-72 ժամվա ընթացքում: Որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ 50+1 տոկոս ձայներով: Այդ քվեարկության արդյունքում համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել: Հակառակ դեպքում՝ գործընթացը դադարեցվում է, եւ նոր նախագիծ կարող է ներկայացվել միայն 6 ամիս հետ:

Հիշեցնենք՝ սեպտեմբերի 14-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում հայտարարել էր, թե հայկական կողմն ուզում է ստորագրել մի թուղթ, որի արդյունքում շատերն իրենց դավաճան կանվանեն, ժողովուրդը գուցե որոշի հեռացնել նրանց իշխանությունից, սակայն իրենք գոհ ու շնորհակալ կլինեն, որ Հայաստանը 29 800 քառ. կմ տարածքով տեւական խաղաղություն կստանա:

Ավելի ուշ, երբ այս հայտարարությունը լսած քաղաքացիներն արդեն բողոքի ակցիաներ էին կազմակերպել Երեւանի կենտրոնական փողոցներում, Փաշինյանը հանդես եկավ նոր հայտարարությամբ՝ «Ֆեյսբուքում» գրելով, որ որեւէ փաստաթուղթ չի ստորագրվել եւ չի պատրաստվում ստորագրման:

Վարչապետից հետո նույնաբովանդակ հայտարարություններով հանդես եկան նաեւ ԱԽ-ը, ԱԱԾ-ն, ԱԺ նախագահն ու իշխող կուսակցության առանձին ներկայացուցիչներ:

Այդ ընթացքում Փաշինյանի հայտարարությունից դժգոհ հազարավոր քաղաքացիներ խորհրդարանի դիմաց պահանջում էին նրա հրաժարականը:

ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները եւս միացան բողոքի ակցիաներին ու խոստացան՝ եթե ՔՊ 18 պատգամավորներ կմիանան իրենց, պատրաստ են սկսել վարչապետի ինպիչմենտի գործընթացը: Այս հայտարարությունից հետո նրանք մտան ԱԺ՝ այն իրականացնելու խոստումով:

Նշենք, որ Վահագն Ալեքսանյանն այսօր իր ելույթում ակնարկեց, որ այդ հարցով ԱԺ-ում որեւէ ընդդիմադիր իրենց չի մոտեցել:

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԱՏԱԽԱԶԻ ՄՈՒՏՔԸ

ՀՀ Գլխավոր դատախազության կոլեգիայի հրաժեշտի նիստը եւ նորանշանակ դատախազ Աննա Վարդապետյանի մուտքը Գլխավոր դատախազություն բավականին ուշագրավ մթնոլորտում են անցել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Աննա Վարդապետյանը կոլեգիայի նիստի ժամանակ որեւէ դատախազի հետ չի շփվել եւ որեւէ բառ չի ասել: Նա բացառապես խոսել է ՀՀ հեռացող Գլխավոր դատախազի՝ Արթուր Դավթյանի հետ. նրան գիրք է նվիրել եւ հաջողություն մաղթել: Այս ամենից հետո Աննա Վարդապետյանը ամբիոնից դատախազներին պատմել է իր մասին ու հեռացել: Դատախազները նիստից հետո գնացել են իրենց աշխատասենյակներ՝ սպասելով, թե ինչ ճակատագիր է սպասվում իրենց: Իսկ նախկին Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հրաժեշտից առաջ ասել է, որ շնորհակալություն է հայտնում բոլորին, այդ թվում՝ նաեւ քննադատողներին ու հեռացել է: Ի դեպ, Դավթյանը չի համբուրել դատախազության դուռը:

Նշենք նաեւ, որ «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ նիստից անմիջապես հետո ՀՀ զինդատախազ Վահե Հարությունյանը երկրորդ անգամ է ազատման դիմում գրել:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը գումար կստանա՝ կուսակցություններին աուդիտի ենթարկելու համար: Նշենք, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին է վերապահված կուսակցությունների ընթացիկ՝ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերման գումարը կազմում է 10 մլն 84 հազար դրամ:

Իսկ պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների աուդիտի պայմանագրի գները սահմանվել են հետեւյալ կերպ. «Քաղաքացիական պայմանգիր» կուսակցություն՝ 4 մլն 800 հազար դրամ, «Հանրապետություն» կուսակցություն՝ 810 հազար դրամ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 960 հազար դրամ, «Հայաստան դաշինք» 3 մլն 514 հազար դրամ (որում ներառված են՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը՝ 2 մլն 320 հազար դրամ, «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը՝ 1 մլն 194 հազար դրամ), իսկ մյուս կուսակցություններինը՝ 9 մլն 300 հազար դրամ, որից «Հայաստանի դեմոկրատական»՝ 1 մլն 170 հազար դրամ, «Մեր տունը Հայաստանն է»՝ 1 մլն 230 հազար դրամ, «Հայրենիք»՝ 1 մլն 455 հազար դրամ, «Ապրելու երկիր»՝ 1 մլն 485 հազար դրամ, «Հայաստանի Հանրապետական»՝ 3 մլն 120 հազար դրամ եւ «Լուսավոր Հայաստան»՝ 840 հազար դրամ:

Մեզ հայտնի դարձավ, որ այս մասին որոշման նախագիծը ներառված է ՀՀ կառավարության սեպտեմբերի 16-ի նիստի օրակարգում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն առաջարկում է սահմանել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության՝ 2022 թվականի ձմեռային զորակոչի կազմակերպման ու անցկացման գործընթացը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՊՆ-ն նախատեսում է հայտարարել 2022 թվականի հոկտեմբերի 24-ից մինչեւ 2023 թվականի հունվարի 31-ը ներառյալ ՀՀ արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ինչպես նաեւ այն քաղաքացիների, որոնց շարքային կազմի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարում է մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Նշենք, որ 2022 թվականի ձմեռային զորակոչի շրջանակներում մինչեւ 2023 թվականի մարտի 31-ը ներառյալ կզորացրվեն շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողները՝ օրենքով սահմանված ժամկետում :

Ի դեպ, տեղեկացնենք, որ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է Կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ:

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ ՔԱՀԼԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հեռախոսազրույց է ունեցել Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության քարտուղարի՝ քաղաքականության հարցերով տեղակալ Քոլին Քահլի հետ:

Սուրեն Պապիկյանը Քոլին Քահլին է ներկայացրել ադրբեջանական լայնածավալ ագրեսիայի հետեւանքով ստեղծված իրադրությունը՝ դրա հանգուցալուծման հարցում ընդգծելով միջազգային հանրության հասցեական գնահատականների անհրաժեշտությունը: Պաշտպանության նախարարը շնորհակալություն է հայտնել Քոլին Քահլին՝ իրավիճակին արագ արձագանքելու համար:

Քոլին Քահլը իր հերթին, կարեւորել է հրադադարի պահպանումը, շեշտել բանակցային սեղանին վերադառնալու եւ առկա բոլոր տարաձայնությունները բացառապես դիվանագիտական գործիքակազմով լուծելու անհրաժեշտությունը: Քոլին Քահլը հայտնել է Ամերիկայի Միացյալ Նահանգների դիրքորոշումն առ այն, որ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությունը սակարկման առարկա չպետք է լինեն:

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է

ԱԳՐԵՍԻԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ ԲԱՆԱՁԵՎ

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը, ամերիկահայ համայնքի լայն համախմբմամբ, աշխատում է Հայաստանի նկատմամբ ադրբեջանական վերջին ագրեսիան դատապարտելու ուղղությամբ՝ ողջունելով ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ավելի քան քսան եւ Սենատի ութ անդամների կողմից հասցեական դատապարտող հայտարարությունները՝ Ալիեւին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Կոնգրեսի հայկական հարցերով խմբի կոչը, ինչպես նաեւ Ներկայացուցիչների պալատի հեսախուզության հանձնաժողովի նախագահ Ադամ Շիֆի կողմից՝ Ադրբեջանին ամերիկյան ռազմական օժանդակությունից զրկելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության ներկայացումը: Այս մասին տեղեկանում ենք ՀՅԴ հանրային կապերի գրասենյակից:

Սեպտեմբերի 13-ին տարածված հայտարարությամբ՝ Կոնգրեսի հայկական հարցերով խմբի համանախագահներ Ֆրենք Փալոնը, Գուս Բիլիրակիսը, Ջեքի Սփիերը, Դավիդ Վալադաոն եւ Ադամ Շիֆը մասնավորապես ընդգծել են. «Մենք խստորեն դատապարտում ենք ադրբեջանական ուժերի կողմից ռազմական գործողությունները Հայաստանի հարավում: Նախագահ Ալիեւը դեռեւս շարունակում է նույն մահացու հարձակումները Հայաստանի ինքնիշխան տարածքի վրա՝ արդարացում փնտրելով 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմից հետո իր շարունակական թշնամանքի համար եւ փորձելով ստիպել Հայաստանին ենթարկվել կապիտուլյացիայի՝ ընդունել անհիմն տարածքային պահանջներ: Համաշխարհային առաջնորդները չպետք է ձեռքերը ծալած մնան եւ կեղծ հավասարություն դնեն երկու կողմերի միջեւ: Այս հակամարտությունում կա միայն մեկ ագրեսոր, որին պետք է կանգնեցնել: Մենք կոչ ենք անում Բայդենի վարչակազմին անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ դադարեցնելու Ադրբեջանի ագրեսիան, եւ վերջապես Ալիեւին, իր ապակայունացնող գործողությունների համար, ենթարկել պատասխանատվության»:

Կոնգրեսի հայկական հարցերով խմբի համանախագահների հայտարարությունից կարճ ժամանակ անց Ադամ Շիֆը Ներկայացուցիչների պալատում ներկայացրել է օրենսդրական նախաձեռնություն՝ նպատակ ունենալով դադարեցնել ամերիկյան օժանդակությունն Ադրբեջանին ու դատապարտել Ալիեւի ագրեսիան Հայաստանի ու Արցախի նկատմամբ:

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի նախագահ Արամ Համբարյանն այս առիթով նկատել է. «Մենք շնորհակալ ենք կոնգրեսմեն Շիֆին եւ Կոնգրեսի հայկական հարցերով խմբին իրենց առաջնորդության համար եւ երախտապարտ ենք բոլոր նրանց, ովքեր արդեն համաձայնել են աջակցել այս երկկուսակցական բանաձեւին: Մենք աշխատում ենք, որ այս բանաձեւը ժամանակին ընդունվի եւ, որպես ամենահրատապ օրենսդրական առաջնահերթություն, անհապաղ դադարեցվի ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրամադրվող ռազմական օգնությունը»:

Կոնգրեսի Հայկական խմբի համանախագահները, համատեղ անդրադառնալով ներկայացված բանաձեւին, նշել են. «Մենք խստորեն դատապարտում ենք ադրբեջանական ուժերի մահաբեր հարձակումները Հայաստանի ինքնիշխան տարածքում: Ադրբեջանական այս աղաղակող էսկալացիան ցույց է տալիս, թե որքան համարձակ է դարձել Ալիեւի ռեժիմը, երբ նրա չհրահրված ագրեսիան ուղեկցվում է միջազգային հանրության խուլ լռությամբ եւ կեղծ ու անհասկանալի փաստարկներով՝ Ադրբեջանին քաջալերելով՝ շարունակելու եւ ընդլայնելու իր հարձակումները: Մենք Բայդենի վարչակազմին եւ Պետդեպարտամենտին կոչ ենք անում միանշանակ դատապարտել Ադրբեջանի գործողությունները եւ անհապաղ դադարեցնել օժանդակությունը Ալիեւի ռեժիմին: Մենք ամուր կանգնած ենք Հայաստանի եւ Արցախի ժողովրդի կողքին՝ ի պաշտպանություն նրանց տարածքային ամբողջականության, խաղաղության եւ ազատության իրավունքի»:

Ներկայացուցիչների պալատում ներկայացված բանաձեւում մասնավորապես ասվում է.

Դատապարտում ենք Ադրբեջանին՝ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վրա կատարած ռազմական հարձակման համար եւ անհապաղ ու անվերապահ հրադադարի կոչ անում:

Կոչ ենք անում նախագահ Բայդենին՝ անհապաղ դադարեցնել Ադրբեջանին տրամադրվող օժանդակությունը՝ համաձայն «Ազատության աջակցության ակտի» 907-րդ հոդվածի պահանջների, եւ Ալիեւի վարչակազմի համար պարզ դարձնել, որ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վրա հետագա հարձակումները կհանգեցնեն պատժամիջոցների կամ այլ գործողությունների:

Վերահաստատում ենք Միացյալ Նահանգների վճռական աջակցությունը Հայաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը, ինչպես նաեւ նրա վճռական հակազդեցությանն Ադրբեջանի ռազմական ագրեսիայի եւ միջազգային օրենքների ու նորմերի բացահայտ խախտումների դեմ:

Աջակցում ենք ԱՄՆ-ի եւ միջազգային մարդասիրական օգնության ծրագրերին՝ բավարարելու ադրբեջանական ագրեսիայի զոհերի հրատապ կարիքները ինչպես Հայաստանում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում:

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբն ամերիկահայ համայնքի մոբիլիզացիայի արդյունքում նախաձեռնել է նաեւ համագաղութային չորս ուղղություններով արշավ՝ ամերիկյան իշխանություններից պահանջելով դատապարտել ադրբեջանական ագրեսիան, դադարեցնել ամերիկյան ցանկացած տեսակի օժանդակություն Ադրբեջանին, օրենսդրորեն սահմանափակել Բաքվին տրամադրվող ամերիկյան ռազմական օժանդակությունը եւ վերականգնել «907-րդ հոդվածի» պահանջների կատարումը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ ԵՐԴՎԵՑ

Աննա Վարդապետյանը երդմամբ ստանձնեց ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնը:

ԱԺ սեպտեմբերի 15-ի նիստում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հայտնեց, որ Գլխավոր դատախազն իր պաշտոնը ստանձնում է ԱԺ նիստում տրված երդմամբ:

Աննա Վարդապետյանը, մոտենալով ԱԺ ամբիոնին, երդվեց. «Ստանձնելով Գլխավոր դատախազի պաշտոնը՝ երդվում եմ՝ անշեղորեն ղեկավարվել ՀՀ սահմանադրությամբ եւ օրենքներով, հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ՀՀ սահմանադրական կարգն ու անվտանգությունը, իմ գործունեությամբ ամրապնդել օրինականությունը, բարձր պահել դատախազության հեղինակությունը, դատախազի կոչումն ու բարի համբավը»:

ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏ

Պաշտոնավարման ավարտի կապակցությամբ հրաժեշտի խոսք է հղել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը: Նրա հրաժեշտի խոսքում, մասնավորապես, ասված է.

«Պաշտոնավարման սահմանադրական ժամկետի ավարտի բերումով թողնում եմ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնը:

Այս կարգավիճակին յուրաքանչյուր օր վերաբերել եմ՝ իբրեւ պատասխանատվության ահռելի բեռով պատվաբեր առաքելության՝ իմ մասնագիտական կարողությունների եւ ուժերի ներածին չափով, Աստծո օգնությամբ, պետությանս, ժողովրդիս ծառայելու գիտակցությամբ, մեր երկրում անվտանգությանն ու կայունությանը, իրավակարգի պաշտպանությանը, դատախազության իմ հարազատ համակարգի զարգացմանը նպաստելու մեծ նվիրումով: Նոր գլխավոր դատախազին մաղթում եմ արդյունավետ գործունեություն իրավական պետության կերտման ճանապարհին՝ հանուն մեր հայրենիքի լուսավոր վաղվա օրվա»:

ԻՆՏԵՆՍԻՎ ԿՐԱԿ

ԽԱԽՏՎԵԼ ԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումները եւ այս պահին հավաքագրված փաստերի ուսումնասիրությունը վկայում են, որ 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին Սյունիքի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերում խաղաղ բնակչությունը եւ կենսական հանրային ենթակառուցվածքները, այդ թվում՝ ուսումնական հաստատությունները, գտնվել են ադրբեջանական ԶՈՒ չտարբերակված թիրախավորման ներքո՝ խախտելով խաղաղ բնակչության, այդ թվում՝ երեխաների, միջազգային իրավական ակտերով երաշխավորված մի շարք իրավունքներ: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է ՄԻՊ աշխատակազմից:

«Սյունիքի, Վայոց ձորի եւ Գեղարքունիքի մարզերում ադրբեջանական հարձակման հետեւանքով խախտվել են երեխաների կյանքի, առողջության, անվտանգ եւ ապահով միջավայրում ապրելու, ընտանիքում եւ համայնքում ապրելու, անձնային զարգացման ու պաշտպանության եւ մի շարք իրավունքներ: Հատուկ պետք է ընդգծել, որ ադրբեջանական զինված ուժերի կողմից տարբեր զինտեխնիկայի կիրառումը առավել ինտենսիվ է եղել հատկապես երեխաների՝ դպրոց եւ մանկապարտեզ հաճախելու ժամերին:

Ստեղծված իրավիճակում հատկապես տեղահանված համայնքների երեխաները զրկված են կրթության իրավունքի իրացման հնարավորություններից: Որոշ դեպքերում դպրոցները եւ մանկապարտեզները գտնվում են ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության եւ թիրախավորման ներքո:

Պաշտպանի աշխատակազմի հավաքագրած տեղեկատվությունը վկայում է ուսումնական հաստատությունների ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի կողմից տարբեր զինատեսակների կիրառման մասին: Օրինակ՝ վնասվել է Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքի ուսումնական հաստատությունը:

Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ուղղակիորեն սահմանում է, որ պատերազմական գործողություններից տուժած երեխաների խնամքի եւ պաշտպանության համար պետք է կիրառվեն հատուկ միջոցներ: Ընդ որում՝ Կոնվենցիան պահանջում է, որ անդամ պետությունները պարտավորվում են հարգել զինված հակամարտություններում երեխաների իրավունքներին վերաբերող միջազգային մարդասիրական իրավունքը:

Այս համատեքստում կարեւոր է եւս մեկ անգամ ընդգծել, որ զինված հակամարտության կամ ռազմական իրավիճակում ռազմական գործողությունների չմասնակցող երեխաների իրավունքները երաշխավորվում են «Քաղաքացիական անձանց մասին» 1949 թ. Ժնեւի կոնվենցիայով, 1977 թվականի հունիսի 8-ի թիվ 1 լրացուցիչ արձանագրությամբ: Երեխաների իրավունքների կոմիտեն, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, Գլխավոր ասամբլեայի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված փաստաթղթերով կարեւորվել է ոչ միայն ռազմական գործողությունների ընթացքում երեխաների իրավունքների խախտման անթույլատրելի լինելը, այլ նաեւ այն հետեւանքների կանխարգելման հրամայականը, որն անհրաժեշտ է երեխաների առօրյա կյանքի, նրանց մտավոր եւ ֆիզիկական զարգացման երաշխավորման համար: Այս կառույցների կողմից բազմիցս դատապարտվել է նաեւ ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք եւ պաշտպանություն իրականացնող հաստատությունների վրա հարձակումն ու նրանց թիրախավորումը:

Մարդու իրավունքների պաշտպանը եւս մեկ անգամ ընդգծում է, որ երեխաները հատուկ պաշտպանության ներքո են:

Ըստ այդմ՝ Պաշտպանը հրավիրում է երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցների ուշադրությունը՝ հստակ արձագանքելու Հայաստանի Հանրապետության նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի հարձակման հետեւանքով Վայոց ձորում, Սյունիքում եւ Գեղարքունիքում գտնվող երեխաների իրավունքների կոպտագույն խախտումներին եւ գործնական քայլեր ձեռնարկել դրանց հրատապ վերացման ուղղությամբ»,- նշում են ՄԻՊ աշխատակազմից:

ՑԱՎԱԼԻ Է

ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Ադրբեջանական հրետակոծության հետեւանքով վիրավորում ստացած քաղաքացիական անձանց թիվը հասել է յոթի:

Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից հայտնեցին, որ սեպտեմբերի 15-ի դրությամբ հիվանդանոցներում շարունակում է ստացիոնար բուժում ստանալ չորս քաղաքացիական անձ:

«Մեկի վիճակը ծայրահեղ ծանր է, երկուսինը՝ ծանր, չորրորդինը՝ միջին ծանրության»,-հայտնեցին նախարարությունից՝ հավելելով, որ յոթերորդ քաղաքացիական անձը ամբուլատոր սպասարկվելուց հետո դուրս է գրվել: Ավելի վաղ եւս երկու տուժած էր դուրս գրվել:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները սահմանի ողջ երկայնքով հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել էին ինտենսիվ կրակ վարել հայկական դիրքերի ուղղությամբ՝ կիրառելով նաեւ ԱԹՍ-ներ: Հակառակորդը հարվածում էր թե՛ ռազմական, թե՛ քաղաքացիական օբյեկտներին, որոշ ուղղություններով ձեռնարկում դիրքային առաջխաղացման գործողություններ:

Սեպտեմբերի 14-ին՝ ժամը 17:00-ի դրությամբ, հայկական կողմը հաստատված 105 զոհ ունի:

Սեպտեմբերի 15-ին՝ կեսգիշերն անց, Հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հայտարարել է, որ միջազգային հանրության ներգրավվածության շնորհիվ հաջողվել է ձեռք բերել կրակը դադարեցնելու պայմանավորվածություն:

Պաշտպանության նախարարության հաղորդմամբ՝ սեպտեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ի դրությամբ, հայ-ադրբեջանական սահմանին էական միջադեպեր չեն արձանագրվել:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՎԱՆՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ սեպտեմբերի 15-ին՝ ժամը 00:30-ին, որովայնի կտրած-ծակած թափանցող վերքով «Սեւան» հիվանդանոց է տեղափոխվել Արարատ Ղազարյանը: Ավելի ուշ իրավապահները պարզել են, որ Սեւանա լճի ափին սեպտեմբերի 14-ին՝ ժ. 23:30-ին, «Արեւիկ» ռեստորանի սրահում վիճաբանություն է եղել, որի ժամանակ Վ. Մ.-ը, իր հետ նախապես վերցրած խոհանոցային դանակով, 1 անգամ հարվածել է Ա. Ղազարյանին:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դանակահարության պատճառը միջադեպի մասնակիցներից մեկի կնոջը անհանգստացնելու հանգամանքն է եղել:

ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Քիչ առաջ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Դատական դեպարտամենտի ղեկավար Արմեն Հարությունյանն ազատվել է պաշտոնից: Նշենք, որ Արմեն Հարությունյանը ԲԴԽ նախկին նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի մտերիմն է:

Հիշեցնենք, որ Արմեն Հարությունյանը Դատական դեպարտամենտի ղեկավար է նշանակվել 1 տարի առաջ:

Արմեն Հարությունյանը նախկինում եղել է զինվորական դատախազության քննիչ, եւ Գագիկ Ջհանգիրյանը նրա հետ բավականին մտերիմ է եղել: Արդյունքում, Հարությունյանը մեկ տարի առաջ թոշակի անցավ, եւ ահա նախկին դատախազը մեկ տարի անց նոր պաշտոն ստացավ:

Հիշեցնենք, որ 2020 թվականի հուլիսի 10-ին ՀՀ դատախազի տեղակալ, արդարադատության II դասի պետական խորհրդական Արմեն Հարությունյանը, սեփական դիմումի համաձայն, աշխատանքից ազատվել է: Արմեն Հարությունյանն աշխատանքից ազատվել է կենսաթոշակի անցնելու կապակցությամբ՝ սեփական դիմումի համաձայն:

2015 թվականի հունվարի 13-ից Արմեն Հարությունյանը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն էր:

ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ՞ ԵՆ

Երեկ Գլխավոր դատախազությունում կոլեգիայի նիստ էր: Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հրաժեշտ էր տալիս աշխատակիցներին: Քիչ անց Գլխավոր դատախազություն ժամանեց նորանշանակ դատախազ Աննա Վարդապետյանը եւ ArmLur.am-ը վերջինիս հարց ուղղեց, թե՝ 44-օրյա պատերազմի զոհերի հարազատները արդեն երկու տարի է, ինչ պահանջում են Նիկոլ Փաշինյանին ձերբակալել, արդյո՞ք նա պատրաստվում է ձերբակալել Նիկոլ Փաշինյանին: Վարդապետյանը, հարցին ի պատասխան ասաց, որ այսօր չի պատրաստվում հարցազրույց տալ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 23 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԱՔՑՆՈՒՄ Է

Նիկոլ Փաշինյանի մանկության ընկեր, նրա դասընկեր, նրա հարսանիքի քավոր Հայկ Ղալումյանը 2010-2019 թթ.-ին զբաղեցրել է Խաչատուր Սուքիասյանին պատկանող «ՀայԷկոնոմբանկի» Իջեւանի մասնաճյուղի կառավարչի պաշտոնը: Նա վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումով՝ 2019թ-ի սեպտեմբերի 12-ին նշանակվել է Իջեւանի համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Մինչ այդ 2019թ. սեպտեմբերի 5-ին Իջեւանի համայնքապետի պաշտոնից հրաժարական էր տվել Հայկ Ղալումյանի ազգակից-բարեկամ Վարդան Ղալումյանը: Վ. Ղալումյանի հրաժարականի պատճառը նրա նկատմամբ հարուցված քրեական գործն էր: Քրեական գործի հիմքն այն էր, որ Իջեւանի քաղաքապետարանի եւ դրա ենթակայությամբ գործող հիմնարկի 2 աշխատակից տեւական ժամանակ աշխատանքի չէին գնացել, սակայն աշխատավարձ էին ստացել: Հետո այդ քրեական գործը փակվեց, ինչը առիթ է տալիս մտածելու, որ Վ. Ղալումյանի նկատմամբ քրեական գործի հարուցման նպատակը՝ Նիկոլ Փաշինյանի ընկեր Հայկ Ղալումյանի համար համայնքապետի պաշտոնն ազատելն էր: Հ. Ղալումյանը՝ որպես համայնքի ղեկավարի պաշտոնակատար, աշխատեց ավելի քան մեկուկես տարի: 2021թ-ի ապրիլի 8-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումով՝ Հայկ Ղալումյանը նշանակվեց Տավուշի մարզպետ եւ մինչ օրս որպես մարզպետ պաշտոնավարում է: Հ. Ղալումյանը լինելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ՝ որոշ տեղեկություններով՝ ղեկավարելով այդ կուսակցության Տավուշի մարզային կառույցը, իր պաշտոնական կենսագրության մեջ չի նշել, որ ՔՊ կուսակցության անդամ է :

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն 20 հազար 21 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջով հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ «Տավուշ» Ջրօգտագործողների ընկերության: Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աշոտ Ջավախյանի 2022 թ-ի հունիսի 3-ի որոշմամբ՝ հայցադիմումն ընդունվել է վարույթ, գործը քննվել է պարզեցված վարույթի կարգով: 2022 թ-ի հունիսի 17-ին «Տավուշ» Ջրօգտագործողների ընկերության ներկայացուցիչ Դավիթ Փարսադանյանի կողմից դատարան է ներկայացվել առարկություն: Հունիսի 26-ին դատավոր Ա. Ջավախյանը որոշել է «ՄՏՍ Հայաստան» ՓԲ ընկերության՝ ընդդեմ «Տավուշ» Ջրօգտագործողների ընկերության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով պարզեցված վարույթը դադարեցնել եւ գործը քննել ընդհանուր հայցային վարույթի կարգով: Սույն քաղաքացիական հայցով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Նոյեմբերյան քաղաքի նստավայրում կայանում են նախնական դատական նիստեր:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏՆԻ ԵՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել են 2022 թվականի 3-րդ քննաշրջանի՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգն ու ժամանակացույցը:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ ըստ այդմ՝ դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կանցկացվեն 2022 թվականի հոկտեմբերի 15-ից մինչեւ նոյեմբերի 15-ը՝ներառյալ, Երեւանի թիվ 198 ավագ դպրոցում:

Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները «Համաշխարհային պատմություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների քննությունները կհանձնեն գրավոր, իսկ «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ եւ անվտանգ կենսագործունեություն», «Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները՝բանավոր:

«Ֆիզկուլտուրա» առարկայի քննության անցկացման եղանակը նորմատիվների հանձնումն է:

Գրավոր քննական թեստերը կազմում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնը՝ յուրաքանչյուր առարկայից առնվազն 4 թեստ՝գնահատման 20 բալային համակարգով: Բանավոր քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

Հիմնական կրթության վկայականում եւ միջնակարգ կրթության ատեստատում ավարտական եւ պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի: Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով եւ համարվում են տարեկան գնահատականներ:

Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետեւյալ սանդղակի՝

20 միավոր - 10
18-19 միավոր - 9
16-17 միավոր - 8
14-15 միավոր - 7
12-13 միավոր - 6
10-11 միավոր - 5
8-9 միավոր - 4

2022 թվականի 3-րդ քննաշրջանի՝ դրսեկության ձեւով (էքստեռն) քննությունները կանցկացվեն՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

Դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու եւ անցկացնելու գործընթացը համակարգում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 15-ի ՀՀ ԱԺ նիստին պատգամավորները երկրորդ եւ վերջնական ընթերցմամբ մի շարք օրենսդրական փոփոխություններ են հաստատել գործող օրենքներում:

Դրանց թվում են.

«Ազգային ժողովի կանոնակարգում» (սահմանադրական օրենք) փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը,

Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը,

Բացի այդ, պատգամավորներն առաջին ընթերցմամբ մի շարք այլ օրինագծեր են հաստատել:

Դրանց թվում են.

«Փոստային կապի մասին» օրենքում լրացումներ կատարելու եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթը,

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը,

«Կրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը,

«Աուդիովիզուալ լրատվամիջոցների մասին» եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը:

Բացի այդ, պատգամավորներն առաջին ընթերցմամբ մի շարք այլ օրինագծեր են հաստատել: Դրանց թվում են.

«Փոստային կապի մասին» օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթը,

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը,

«Կրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը,

«Աուդիովիզուալ լրատվամիջոցների մասին» եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը,

«Հարկային ծառայության մասին» եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթը,

«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» օրենքում լրացումներ կատարելու եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» օրինագծերի փաթեթը,

«Զինվորական ծառայության եւ զինծառայողների կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը,

«Զինվորական ծառայության եւ զինծառայողների կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծը,

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթը,

«Փաստաբանների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթը:

Պատգամավորները վավերացրել են նաեւ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում վարկային պատմություններում ներառված տեղեկատվության փոխանակման կարգի մասին» համաձայնագիրը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 2 մարդ մահացել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՎՆԱՍՎԵԼ Է 192 ՏՈՒՆ

Հայաստանի դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետեւանքով, նախնական տվյալներով, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերում վնասվել է 192 բնակելի տուն: Այս մասին հայտնել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը՝ տեղեկացնելով, որ դրանցից 60-ն ամբողջությամբ վնասվել է:

«Վնասվել են բնակելի տներ, օժանդակ կառույցներ, անասնապահական շինություններ, գյուղատնտեսական նշանակության գույք, վարչական շենքեր, հյուրատներ եւ այլն: Վնասվել են նաեւ ավտոմեքենաներ, այդ թվում՝ շտապօգնության ծառայության: Որոշ տեղերում ունեցել ենք հոսանքազրկումներ, որոնք շատ արագ վերականգնվել են: Այս պահին էլեկտրականության հետ կապված խնդիր ունենք Ներքին Շորժայի հատվածում: Հասկանալի պատճառով էլեկտրականության, կապի մատակարարումը այդ հատվածում դեռ չի վերականգնվել, սակայն առաջին իսկ հնարավորության դեպքում կվերականգնվի»,-ասաց Վաչե Տերտերյանը:

Այլ կարգի ենթակառուցվածքային խնդիրներ՝ ճանապարհների փլուզում, ջրամատակարարման խափանումներ չկան: Կան տարբեր խնդիրներ, որոնք ընթացքում շատ արագ կարգավորվում են: Վաչե Տերտերյանը նշեց, որ երեք մարզերում էլ ղեկավարությունը հետեւում է իրավիճակին, համակարգում են աշխատանքները շուրջօրյա ռեժիմով: Որոշակի հնարավորության դեպքում ամբողջական գույքագրումը կիրականացվի շատ արագ:

«Կստեղծվեն մասնագիտական հանձնախմբեր, որոնք տեղում ավելի մանրակրկիտ կհաշվառեն վնասները: Մեր քաղաքացիներն այդ առումով կարող են հանգիստ լինել: Եթե նույնիսկ որեւէ բան բաց է մնացել, ապա համայնքների աշխատակազմերի միջոցով պատշաճ կարվի այդ աշխատանքը»,-ասաց Վաչե Տերտերյանը:

Նա վստահեցրեց, որ ռազմական գործողությունների հետեւանքով տուժած յուրաքանչյուր քաղաքացի լինելու է կառավարության ուշադրության կենտրոնում:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեն կապի մեջ է սեպտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը Ադրբեջանի կողմից Հայաստանի վրա հարձակման հետեւանքով՝ ադրբեջանական կողմում հայտնված հնարավոր հայ գերիների ընտանիքների հետ:

Այս մասին հայտնել է ՀՀ-ում ԿԽՄԿ պատվիրակության հաղորդակցման եւ կանխարգելման ծրագրի ղեկավար Ջառա Ամատունին: Անդրադառնալով սեպտեմբերի 13-ին զինծառայողների դիերը Հայաստանին վերադարձնելու պատրաստակամության մասին Ադրբեջանի հայտարարությանը՝ Ջառա Ամատունին ասաց, որ իրենք տեղյակ են դրա մասին. «Այս պահին մենք այդ հարցերով երկխոսության մեջ ենք Հայաստանի իշխանությունների հետ: Երբ լինի տեղեկություն, մենք արդեն կկարողանանք հաստատել»: Գերիների թվի մասին էլ վերջինս ոչինչ չհայտնեց՝ նշելով, որ այժմ հավաքագրման փուլում են:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂԵՐՁՆԵՐ Է ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ

Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) կոչ է անում համաշխարհային բնապահպանական համայնքի իր բոլոր գործընկերներին՝ դատապարտել ադրբեջանական ագրեսիան հայկական հողի վրա: Հիմնադրամն իր միջազգային գործընկերների շրջանակում տարածել է կարեւոր ուղերձներ պարունակող հայտարարություն: Ավելի մանրամասն տեղեկատվության համար կից ներկայացնում ենք հայտարարության տեքստը:

«Սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը լայնածավալ հարձակում է ձեռնարկել Հայաստանի դեմ՝ Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանի արեւելյան հատվածում՝ Վարդենիս, Սոթք, Արտանիշ, Ջերմուկ, Գորիս եւ Կապան բնակավայրերում թիրախավորելով ոչ միայն ռազմական ենթակառացվուծքները, այլեւ խաղաղ բնակչությանը: Ադրբեջանը խախտել է Հայաստանի՝ ՄԱԿ-ի կողմից ճանաչված երկրի ինքնիշխանությունն ու ամբողջականությունը՝ գնդակոծելով խաղաղ բնակիչներին եւ խախտելով Ժնեւի կոնվենցիան:

Հայաստանը Կովկասի կենսաբազմազանության թեժ կետերից է. կենդանական աշխարհի ավելի քան 500 տեսակ եւ բուսական աշխարհի 144 տեսակ համարվում են էնդեմիկ: Հայաստանի միջազգայնորեն կարեւոր հարուստ կենսաբազմազանությունը ներառում է 377 թռչունների տեսակներ, համաշխարհայնորեն վտանգված 14 թռչուն, 18 Կարեւորագույն թռչնաբանական տարածքներ (IBA), «Էմերալդ» համաշխարհային էկոլոգիական ցանցում ներառված 9 բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներ, Թիթեռների ապրելավայրի կարեւորագույն 12 տարածք (PMA) եւ 32 Կարեւոր բուսաբանական տարածք (IPA), որոնք ընդհանուր առմամբ ընդգրկում են Հայաստանի շուրջ 15%-ը:

Ադրբեջանի ռազմական ագրեսիան ուղղակի ազդեցությամբ ծայրահեղ վտանգում է Սեւանա լճի, Ջերմուկի, Նորավանքի, Գորայքի, Մեղրիի եւ Զանգեզուրի ԿԹՏ-ները: Սեւանա լճի ԿԹՏ-ում է տեղակայված Հայկական որորի՝ աշխարհում մեծությամբ երկրորդ գաղութը. Հայաստանում է գտնվում հայկական որորի եվրոպական պոպուլյացիայի շուրջ 40%-ը:

Հայաստանի արեւելք-հարավ սահմանագծի երկայնքով Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունները, դրանց արդյունքում բռնկված անտառային հրդեհները սպառնում են համաշխարհային եւ ազգային կարմիրգրքային տեսակների՝ ինչպիսիք են Կովկասյան հովազը (Panthera pardus tulliana), հայկական մուֆլոնը (Ovis gmelini gmelini), բեզոարյան այծը (Capra aegagrus aegagrus), գորշ արջը (Ursus arctos syriacus), կովկասյան լուսանն (Lynx lynx dinniki) ու եվրասիական ջրասամույրը (Lutra lutra):

Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը կոչ է անում համաշխարհային բնապահպանական համայնքի իր բոլոր գործընկերներին դատապարտել ադրբեջանական ագրեսիան հայկական հողի վրա»:

ԼՈՒՐԵՐ

ԷՋՄԻԱԾՆԻ 2707–ԱՄՅԱԿ

Էջմիածնի հիմնադրման 2707-ամյակին նվիրված միջոցառումները չեղարկված են: Այս մասին հաղորդում է Էջմիածնի քաղաքապետարանը:

Պայմանավորված վերջին օրերին հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակով՝ հոկտեմբերի 8-ին նախատեսված պաշտոնական, մշակութային, տոնական բոլոր միջոցառումները, քաղաքային գրադարանի նոր շենքի հիմնարկեքի արարողությունը եւ քուֆթայի փառատոնը չեղարկված կամ անժամկետ հետաձգված են:

Դեռեւս շարունակվում են միայն «Բարեկամության ներկապնակ» միջազգային սիմպոզիումի նախապատրաստական աշխատանքները. սիմպոզիումին մասնակցում են ինչպես հայ, այնպես եւ այլազգի արվեստագետներ, ովքեր շուրջ մեկ շաբաթ կգտնվեն Էջմիածնում: Հարկ ենք համարում արվեստի միջոցով անդրադարձ կատարել մեր քաղաքի հիմնադրման օրվան եւ միջազգային հանրության ու մամուլի արձագանքը եւս մեկ առիթով բեկել Հայաստանի ուղղությամբ: Սիմպոզիումը նախատեսված է հոկտեմբերի 1-7-ը:

ՀԱՏՈՒԿ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Իրանի Իսլամական Հանրապետությունը հստակորեն եւ տարբեր մակարդակներում արտահայտել է իր դիրքորոշումը կովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումների եւ երկու հարեւան երկրների՝ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության հետ ունեցած հարաբերությունների վերաբերյալ: Այս մասին ասվում է ՀՀ-ում Իրանի դեսպանության՝ «Լուրերին» տված մեկնաբանության մեջ:

«Ինչպես որ հեղափոխության գերագույն առաջնորդի եւ Ռուսաստանի ու Թուրքիայի նախագահների միջեւ կայացած հանդիպումները լուսաբանող լուրերում ականատես եղանք, Իրանը դեմ է հարեւան երկրների տարածքային ամբողջականության եւ սահմանների խախտմանը եւ հատուկ դիմադրություն կցուցաբերի ցանկացած սցենարի, որը կվնասի երկու հարեւան ժողովուրդներին կապող պատմական ուղի հանդիսացող Իրան-Հայաստան սահմանին:

ԻԻՀ նախագահի եւ ՀՀ մեծարգո վարչապետի, ինչպես նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարների միջեւ կայացած հեռախոսազրույցի ընթացքում մեր այս սկզբունքային դիրքորոշումը կրկնվել է:

ԻԻՀ ԱԳ նախարար Ամիր Աբդոլլահիանը Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Բայրամովի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում մտահոգություն էր հայտնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ծագած ընդհարումների նոր փուլի կապակցությամբ եւ խնդիրների խաղաղ ճանապարհով կարգավորմանը աջակցելու ուղղությամբ պատրաստակամություն հայտնելու հետ մեկտեղ հստակորեն ընդգծել է, որ Իրանի համար կարեւոր է երկու հարեւան երկրների տարածքային ամբողջականության պահպանումը եւ այն, որ Իրան-Հայաստան սահմանը պատմական հաղորդակցության ուղի է, եւ պետք է մնա առանց փոփոխության»,- ասված է դեսպանության մեկնաբանությունում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

«ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼՈՒՐՔ Է»

Հայաստանում պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ իրենց մտահոգությունն են հայտնել եւ միջազգային կառույցներին կոչով դիմել աշխարհահռչակ հայեր:



Ամերիկացի հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը «Ինստագրամ»-ի իր պաշտոնական էջի միջոցով անդրադարձել է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիային:

«Պատկերացրեք՝ ստիպված եք դա անել՝ առանց ֆինանսական միջոցների, տրանսպորտի, առանց ռեսուրսների եւ որեւէ օգնության: Հայաստանը ստիպված չէ պատկերացնել վերոնշյալ իրավիճակը, քանի որ երեկվանից այդ ամենը նրա համար իրականություն է: Եվ միակ նախազգուշացումը բնակիչների տան բակերում ընկած հրթիռներն են: Աղոթեք Հայաստանի համար»,-ասվում է գրառման մեջ:

Ամերիկահայ հեռուստաաստղ եւ գործարար Քիմ Քարդաշյանի եղբայրը՝ Ռոբերտ Քարդաշյան կրտսերը իր ինստագրամյան էջի «Սթորի» բաժնում արված հրապարակմամբ անդրադարձել է ՀՀ սահմանին առկա իրավիճակին:

«Պատկերացրեք ձեր օրը սկսում եք այլ օրերի պես. արթնանում եք, համբուրում եք ձեր կնոջն ու երեխաներին եւ գնում աշխատանքի: Երեկոյան վերադառնում եք տուն, հավաքում առաջին անհրաժեշտության իրերն ու ձեր կնոջ ու երեխաների հետ վազում որքան հնարավոր է հեռու՝ թողնելով ընտանիքին եւ ընկերներին: Թողնում եք ամենը՝ ինչ ստեղծել եք եւ ձեր երկիրը՝ փրկելու ձեր ընտանիքի եւ ձեր կյանքը: Հիմա այս ամենը պատկերացրեք առանց կյանքի հարմարավետությունների, որոնք ունեք ԱՄՆ-ում: Պատկերացրեք, որ այս ամենը պիտի անեք առանց ֆինանսական միջոցների, առանց տրանսպորտի, առանց որեւէ մեկի օգնության: Ցավոք, Հայաստանում պատկերացնելու կարիք չկա. երեկվա դրությամբ դա իրականություն է, եւ միակ նախազգուշացումը հրթիռներն էին, որոնք ընկել են մարդկանց բակերում: Աղոթե՛ք Հայաստանի համար»:

Ամերիկյան Fox 11 հեռուստաալիքի հաղորդավարուհի, «Էմմիի» մրցանակակիր Արաքսյա Կարապետյանն անդրադարձել է Ադրբեջանի կողմից Հայաստանի սահմանին սկսած պատերազմին:

«Այն զգացողությունները, որոնք ունեի 2020-ին, վերադառնում են: Արթնանալով վախենում էի վերցնել հեռախոսս ու տեսնել, թե ինչ է կատարվում... Չեմ ցանկանում կրկին հայտնվել այդ խավարի մեջ: Մեզանից ոչ ոք չի ցանկանում: Դրա մասին միտքն անգամ ֆիզիկական ցավ է պատճառում: Ինձ միայն հետաքրքիր է՝ արդյոք մարդիկ ակտիվ կլինե՞ն, կբարձրացնե՞ն իրենց ձայնը, ինչպես անում էին վերջին միջազգային պատմությունների դեպքում: Կխոսե՞ն, արդյոք, դրա մասին, կմտահոգվե՞ն, կկիսվե՞ն, կտարածե՞ն, կամ, գոնե, մի հեշթեգ կօգտագործե՞ն այդ թեմայով, թե՞ մենք կրկին միայնակ ենք մնալու: Իրավիճակը Հայաստանում շատ լուրջ է»,-գրել է նա:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները Վարդենիսի, Սոթքի, Արտանիշի, Իշխանասարի, Գորիսի եւ Կապանի ուղղություններով հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել են ինտենսիվ կրակ վարել հայկական դիրքերի ուղղությամբ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«ՍԵՎԱԶԳԵՍՏ ԿԱՆԱՅՔ»

«Դեմք շոու» կազմակերպությունը հայտնել է, որ Հայաստանում պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ անժամկետ հետաձգվում է «Սեւազգեստ կանայք» ֆիլմի պրեմիերան:

«Հաշվի առնելով վերջին իրադարձությունները՝ «Սեւազգեստ կանայք» ֆիլմի առաջիկա օրերի ցուցադրությունները անորոշ ժամանակով հետաձգվում են:

Կինոթատրոններից նախապես գնված բոլոր օնլայն եւ օֆլայն տոմսերն ուժի մեջ կլինեն, կարող են օգտագործվել հետագա ցուցադրությունների համար:

Հայցում ենք Ձեր ներողամտությունը»,-գրված է հայտարարության մեջ:

Նշենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ «Սեւազգեստ կանայք» գեղարվեստական ֆիլմի պրեմիերան պետք է կայանար սեպտեմբերի 16-ին:

ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ ՀԵՏԱՁԳԵԼ Է

Երգիչ Արկադի Դումիկյանը նույնպես՝ Հայաստանում պատերազմական իրավիճակով պայմանավորված, հետաձգել է սեպտեմբերի 18-ին կայանալիք մենահամերգը:

Այս մասին երգիչը հայտնել է իր երկրպագուներին՝ նշելով. «Սիրելի հայրենակիցներ, վերջին իրադարձություններով պայմանավորված, սեպտեմբերի 18-ի մենահամերգը տեղափոխվում է: Համերգի նոր ժամկետի մասին կհայտարարեմ մոտ օրերին: Բոլոր գնված տոմսերը մնում են ուժի մեջ»:

Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ նման հայտարարություններով են հանդես եկել ու նախատեսված համերգները հետաձգել երգիչներ Գոռ Հակոբյանը եւ Գեւորգ Մարտիրոսյանը:

Հիշեցնենք, որ սեպտմբերի 12-ին լույս 13-ի գիշերը Ադրբեջանը լայնածավալ հարձակում է սկսել Հայաստանի Հանրապետության սահմանային ողջ երկայնքով:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացել են երկրորդ տուրի հանդիպումները:

Կայացել են E, F, G, H խմբերի երկրորդ տուրի հանդիպումները:

E խմբում «Միլան»-ը տանը 3:1 հաշվով հաղթել է Զագրեբի «Դինամո»-ին, «Չելսի»- «Զալցբուրգ» հանդիպումն ավարտվել է ոչ-ոքի՝ 1:1:

F խմբում Դոնեցկի «Շախտյոր»-ը եւ «Սելթիկ»-ը ոչ-ոքի են ավարտել հանդիպումը, իսկ «Ռեալ»-ը 2 անպատասխան գնդակ է ուղարկել «Լայպցիգ»-ի դարպասը: G խմբում «Մանչեսթեր Սիթի»-ին 2:1 հաշվով առավելության է հասել Դորտմունդի «Բորուսիա»-ի նկատմամբ, «Կոպենհագեն»-«Սեւիլիա» խաղն ավարտվել է զրոյական ոչ-ոքի հաշվով:

H խմբում «Յուվենտուս»-ը զիջել է «Բենֆիկա»-ին (1:2), ՊՍԺ-ն հաղթել է «Հայֆա»-ին՝ 3:1: Խմբային փուլի երրորդ տուրի հանդիպումները կկայանան հոկտեմբերի 5-6-ին:

ՀԱՂԹՈՂԸ

Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում մեկնարկած ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանի թիմից առաջինը մրցագորգ դուրս եկավ Մ23՝աշխարհի եւ Եվրոպայի բրոնզե մեդալակիրը՝ Արման Ավագյանը: 70 կգ քաշայինների 1/16 եզրափակիչում Ավագյանը մրցեց Կանադայի ներկայացուցիչ Ադամ Սքին Թոմսոնի հետ եւ ժամանակից շուտ 11:0 հաշվով տպավորիչ հաղթանակ տարավ՝ դուրս գալով 1/8 եզրափակիչ: Մրցումային առաջին օրը Հայաստանի թիմից պայքարի մեջ կմտնի նաեւ 2022 թվականի Եվրոպայի փոխչեմպիոն Արման Անդրեասյանը: Մեկնարկային 1/8 եզրափակիչում Անդրեասյանի մրցակիցը կլինի որակավորման փուլի Էլի Ջեկունդակոմ Ջերայոմ (Չադի Հանրապետություն) - Ջանլուդա Տալամո (Իտալիա) զույգի հաղթողը:

ՕՔ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳԻՐ

Շոումեն, ՕՔ ամսագրի գլխավոր խմբագիր, Մոսկվայի գեղարվեստական թատրոնի գեղարվեստական ղեկավարի տեղակալ Վադիմ Վերնիկը կորոնավիրուս ախտորոշումով տեղափոխվել է հիվանդանոց: Աղբյուրը պնդում է, որ սկզբում արտիստը փորձել է ինքնուրույն բուժվել, սակայն սրտի հետ կապված առողջական խնդիրների պատճառով նրա վիճակը ծանրացել է: Բժշկական օգնության դիմելուց հետո Վերնիկին տեղափոխել են Մոսկվայի հիվանդանոցներից մեկը: Արտիստի վիճակը գնահատվում է միջին ծանրության: Տարեսկզբին տեղեկություններ էին տարածվել Շոումենի եղբոր՝ Իգոր Վերնիկի՝ կորոնավիրուս ախտորոշումով հիվանդանոց տեղափոխվելու մասին, ինչը, սակայն, արտիստը հերքել էր: Այս շաբաթվա տվյալներով ՌԴ-ում գրանցվել է կորոնավիրուսով վարակման 336 հազար դեպք, ինչը 3,4 տոկոսով գերազանցում է նախորդ շաբաթվա ցուցանիշը: Հիվանդության աճը գրանցվել է 50 մարզում եւ նվազել է 27-ում, այդ թվում՝ Մոսկվայում եւ Մոսկվայի մարզում: 8 մարզում հիվանդության տարածման հարցում էական դինամիկա չկա:

● *Սեպտեմբերի 17-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Անտիկվար» Լեռնիկ ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝19:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են քրեական պատասխանատվությունը բացառող հիմնավորված ռիսկերը:

Լեռնիկ Հայրապետյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել անձի, հասարակության կամ պետության համար օգտակար, իրավաչափ նպատակի հասնելու համար գործադրված հիմնավորված ռիսկի ժամանակ: Ռիսկը համարվում է հիմնավորված, եթե հետապնդվող նպատակին չէր կարելի հասնել առանց ռիսկի դիմելու, եւ ռիսկի դիմած անձն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը կանխելու համար: Ռիսկը հիմնավորված չի համարվում, եթե դա ակնհայտորեն զուգորդված է եղել այլ անձի զոհվելու վտանգով կամ արտակարգ իրավիճակի սպառնալիքով:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել ի կատարումն անձի մասնագիտական գործառույթների, եթե պահպանվել են այդ մասնագիտական գործառույթների իրականացման համար իրավական ակտերով սահմանված պահանջները:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պարտականություններ ունեն խնամակալները եւ հոգաբարձուները:

Հրանտ Բաբայան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Խնամակալության եւ հոգաբարձության պարտականությունները կատարվում են անհատույց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Անչափահաս քաղաքացիների խնամակալները եւ հոգաբարձուները պարտավոր են իրենց խնամարկյալների հետ ապրել համատեղ: Տասնվեց տարին լրացած խնամարկյալից հոգաբարձուի առանձին ապրելը թույլատրում է խնամակալության եւ հոգաբարձության մարմինը, եթե դա անբարենպաստ չի անդրադառնում խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների ու շահերի պաշտպանության վրա: Խնամակալները եւ հոգաբարձուները պարտավոր են խնամակալության ու հոգաբարձության մարմիններին տեղեկացնել իրենց բնակության վայրը փոփոխելու մասին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խնամակալները եւ հոգաբարձուները պարտավոր են հոգալ իրենց խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը եւ դաստիարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Համացանցից

Այս օրերին, երբ զինվորին անհրաժեշտ պարագաների հետ մարդիկ ցանկանում են նաեւ քաղցրավենիք ուղարկել սահման, անհասկանալի է, թե ինչ սրտով են որոշ տնտեսվարողներ այս ֆոնին թանկացրել քաղցրեղենի գինը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: